տևականորեն չեն պատկանել Զաքարյաններին (Բայլական, Միշք-Միանե, Մարանդ), այլ միան մեկ անգամ գրավվել են արշավանքների ժամանակ։ Պարտավի գրավման մասին վկայությունը նաև Ստեփանոս Օրբելյանի երկում, անառարկելի դարձնելով Պարտավ քաղաքի և այդպիսով նաև Հերդ գավառի ներգրավումը Զաքարյանների տիրույթների կազմում, այնուամենայնիվ անվերապահելի ժամանակագրություն առաջարկելու համոզվածություն չի ներշնչում, քանի որ հայտնի են դեպքեր, երբ Զաքարյաններին հարկ էր լինում մեկ անգամ գրված երկրամասերից վտարել թշնամուն պատասխան երկրորդ հարձակմամբ[31]։ Ինչպես երևում է, Ջալալ ադ-Դինը Հերք (Հերքան) բերդն ու շրջակա գավառը ետ էր խլել Զաքարյաններից Անդրկովկաս արշավելու առաջին տարիներին՝ 1225—1226 թթ.։ Հավանական է, որ 1231 թ., խորեզմշահի ջախջախումից ու մահվանից հետո, գավառն ու բերդը վերստին անցել էին Զաքարյաններին։

Հերդ-Հերքի տեղադրությունն ու պատմությունը պարզաբանելուց բացի արժե անդրադառնալ նաև վրացական աղբյուրների Հերեթի հետ նրա կապի հարցին, որի մասին ենթադրել է դեռևս Ղևոնդ Ալիշանը[32]։ Թվում է, թե այս օրինակ վարկածի օգտին է վկայում նաև այն հանգամանքը, որի վրա ուշադրություն է դարձրել Իլյա Աբուլաձեն. «Աղվանքի կամ նրա վրացականացած մասի համար «Հերեթ» անվանումը հայտնի է միայն վրացական աղբյուրներից։ Ամբողջ Հերեթը հայ մատենագրության մեջ (հայտնի է) իբրև Աղվանք։ Ոչ էլ Վրաստանի Հերեթը նշելու համար է հայտնի այս անունը (Հերեթը) հայերենում[33]։ Զարգացնելով այս միտքը, Թ. Պապուաշվիլին ենթադրում է, որ Կիրակոս Գանձակեցու Պատմության Հերդ գավառը և Մխիթար Գոշի «Աղվանից ժամանակագրության» Հերքան-բերդը հայ մատենագրության մեջ եղել են Հերեթը նշող անվանումներ[34]։ Իրականում, սակայն, Հերեթ տեղանունը բավականին հայտնի է նաև ԺԲ—ԺԳ դարերի հայկական աղբյուրներում։ Բացի «Քարթլիս ցխովրեբա»-ի հայերեն թարգմանությունից[35], այս տեղանունը ծանոթ է նաև Ստեփանոս Օրբելյանի Պատմությունից[36]։ ԺԲ դարի իրադարձությունների կապակցությամբ Հերեթը հիշատակում են Դավիթ Քորայրեցին[37] և Վարդան Արևելցին[38]։ Այսպիսով, հայ հեղինակներին լավ հայտնի են ինչպես Աղվանք, այնպես էլ Հերեթ տեղանունները, ուստի դժվար է սպասել, որ մեր մատենագրության մեջ գոյություն է ունեցել Հերեթի մի երրորդ անվանում ևս։ Հերեթ-Հերթ-Հերքան-բերդ նույնացումը առաջարկելիս Թ. Պապուաշվիլու ուշադրությունից վրիպել է այն իրողությունը, որ Գոշը միանգամայն հստակորեն Հերքան-բերդի տեր է համարում թուրքմեն Ազադինին, իսկ 1104—1105 թթ. վրացական թագավորության կազմի մեջ մտցնելուց հետո Հերեթում մահմեդական իշխանավորներ պետք է մնացած

---

31 Տե՛ս Ա. Շահինյան, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 200—202, Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 106։

32 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Համառոտ պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 90, ծ. 1։

33 იაკობ ცურტაველი, მარტვილობა ჲ შუშანიკისა, გამოსცა ილია აბულაძემ, ტფ., 1938, გვ. 057.

34 Տե՛ս თ. პაპუაშვილი. ჰერეთის ისტორიის საკითხები, თბ., 1970, გვ. 106—109.

35 Տե՛ս «Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Իլիա Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 7, 19, 27, 68, 218, 221։

36 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 371։

37 Տե՛ս Դ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 471, Վ. Հակոբյան, Դավիթ Քորայրեցու հիշատակարանը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 119։

38 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 119։